

յայլադէնից գՔադաքն սուրբ, վասն որոյ այս ամենայն խաչակրութիւնք եւ գործք լինէին. այլ նա զքեռորդի իւր Ենրիկ դուքս Շամբանեայ՝ ընծայեցոյց յանուանեալ թագաւորութիւն Երուսաղեմի. քանզի առեալ էր սորա ՚ի կին զԻգապել՝ ժառանգ այնր թագաւորութեան³³, (գայրին Կոնրադայ Մոն-Ֆէրրադայ):– Թէ յայսմ նուագի եւ թէ յետոյ՝ յայտ է մտերմութիւն Լեւոնի եւ ընդ սմա, որպէս ընդ ամենայն ականաւոր արեւմտեայց եկելոց յարեւելս, եւ որ՝ յետ սակաւուց, միջնորդ հաշտութեան եղել ընդ նա եւ ընդ տէրն Անտիոքայ, որպէս ցուցցի յառաջիկայոյ:

Դ. Սալահէտտին եւ Լեւոն

Ի դադարել հնգամեայ խազմին Պաղեստինոյ՝ որ ընդ սուլտանին Եգիպտոսի եւ ընդ քրիստոնեայս, դարձան սոքա յանձանձել զիրաքանչիւր վիճակս, եւ նա զիւր ընդարձակ ինքնակալութիւնն, բաժանելով յեղբարսն, յորդիս եւ յեղբօրորդիս իւր. ըստ այսմ եւ մերս Լեւոն, զիւրն հոգալով ընդարձակել յապահովել եւ երեւելի առնել: Ի դաշինս հաշտութեան հակառակամարտիցն՝ չիք ինչ յիշատակ վասն սորա, զի ոչ էր ՚ի համարի արեւմտեայ գաղթականացն. այլ անմարթ էր վրիպել նորա յաչաց գոռոզ սուլտանին, կամ չերեւել պարտաւոր՝ իբրեւ նիզակակից թշնամեաց իւրոց, եւս առաւել վասն ոգւոյ եւ ջանից աւագասիրութեանն. զայս քաջ զգայր որ նման նմին կրէր ոգի տիրական, եւ զամենայն շուրջակայ բարձրացեալս խոնարհեցուցանել եւ ընդ ձեռամբ իւրով հարթ հաւասար առնել նկրտէր: Ծանօթ էին նմա որ ինչ արար Լեւոն ընդ Ռոստոմ եւ ընդ նմանիսն, եւ եթէ ո՛րպէս արկ զձեռն իւր ՚ի վերայ սահմանաց օտարաց՝ զծովեզերքն, ընդ արեւմուտս եւ ընդ արեւելս, եւ նուաճումն բերդորայիցն՝ որ ՚ի ստորոտս Ամանոսի, առ հարկի ժամուն լքելոց յինքենէ, յորոց վերայ առաւել իրաւունս համարէր ունել Բրինձն Անտիոքայ. եւ այժմու խլրտմունք նորին եւ անուղղակի միջամտութիւնն յիրս դրակցացն Իկոնիացւոց: Քանզի ՚ի նմին իսկ ժամանակի՝ ծեր սուլտանն Խլիճ-Արսլան՝ բաժանէր զընդարձակ տէրութիւնն՝ ընդ տասնեսին որդիս իւր, հանգոյն ինքեան իշխանասէրս, նախանձոտս եւ հակա-

³³ Իգապել դուստր է Գ Պալտինի թագաւորի, որոյ հանին հայրենի՝ դուստր էր Գաբրիէլի Հայ իշխանի Մելիտինեայ. իսկ մայրն Իգապելի Ագնէս՝ թոռն է Ժոսլէնի կոմսի Եղեսիոյ եւ դստեր մերոյս Պարոնի Կոստանդեայ: (տես յէջ 47-8 Տեղագրութեանս):